

# **ՀԱՅ- ԼԱՏՎԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

12.06.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն ընդունել է հայ-լատվիական գործարար համագործակցության խորհրդի պատվիրակությանը:

Հանդիպմանը մասնակցել են մարզպետարանի աշխատակիցներ, մարզը ներկայացնող գործարարներ, ինչպես նաև տարբեր շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ և մի շարք այլ պաշտոնատար անձինք:

Հանդիպման օրակարգի շրջանակներում ներկաներին ողջունել և իր աջակցությունն է հայտնել Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը՝ կարևորելով հայ-լատվիական գործարար համագործակցության շրջանակներում մարզի գործարարների հետ արդյունավետ շփումներն ու հետագա համատեղ ծրագրերի իրականացումը:

Այնուհետև Կոտայքի մարզի գործատուների միության նախագահ, հայ-լատվիական գործարար համագործակցության խորհրդի համանախագահ Ա. Գեղամյանը ներկայացրել է երկկողմ պատվիրակությունների անդամներին և հանդիպման հիմնական նպատակները:

Օրակարգի շրջանակներում գործարար համագործակցության խորհրդի լատվիացի համանախագահ Ի. Կանաչկան ներկայացրել է Լատվիայի տնտեսական ու բիզնես միջավայրը՝ անդրադառնալով հայ-լատվիական գործարար համագործակցության վերաբերյալ մինչ օրս կնքված փաստաթղթերի հիման վրա կատարված աշխատանքներին ու փոխադարձ այցելություններին:

Հանդիպման ընթացքում մարզի գործարարների և Լատվիայի ներկայացուցիչների միջև ձեռք են բերվել հետագա համագործակցությանը միտված մի շարք պայմանավորվածություններ:

Հարկ է նշել նաև, որ հայ-լատվիական գործարար համագործակցության խորհուրդը ձևավորվել է 2013 թվականի հունիսին Ռիգայում կայացած տեխնիկական, գիտական, արդյունաբերական, տնտեսական համագործակցության հայ-լատվիական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի ընթացքում կնքված փաստաթղթերի շրջանակներում: